

Հաղորդագրություն թիվ 113

Հունիսի 3-ին Ալ. Սպենդիարյանի անվան Ազգային Օպերայի եւ Բալետի մեծ դահլիճում բացառիկ տոնակատարություն էր՝ Նյու Յորքից ժամանած «Շուշի» հայկական պարախումբը նշում էր իր 15-ամյակը: Շուրջ 3 ժամ տեւած համերգի ժամանակ ներկաները բազմիցս բուռն ծափահարությունների արժանացրին ազգային ոգով դաստիարակված սաների կատարումները, որոնց երկարամյա ղեկավարն է ընկերուհի Սեդա Փասքալեան Գանթարճեանը:



Երեկոյի ընթացքում հնչեցին ժողովրդական եւ ճանաչված կոմպոզիտորների ազգային երգեր ու պարեր, որոնք ներկաներին պարգեւեցին բազում հաճելի եւ հուզական պահեր:

Համերգի ավարտին բեմ հրավիրվեց ՀՌԱԿ ատենապետ Հարություն Առաքելյանը, որտեղ ընթերցեց եւ իրականացրեց ՀՌԱԿ Հանրապետական Վարչության որոշումը՝

**Հայապահպանման, հայկական մշակույթը բարձր դիրքերի վրա պահելու,
ազգային մտածողությունը Սփյուռքում տարածելու երկարամյա ու
բազմաբովանդակ գործունեության կապակցությամբ
Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցության
Հանրապետական Վարչությունը**

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է

**պարգեւատրել ընկերուհի Սեդա Փասքալեան Գանթարճեանին
Հայաստանի Ռամկավար Ազատական Կուսակցության
Ոսկե Հուշաշքանշանով:**

ՀՌԱԿ լրատվական ծառայություն